Հավելված N 3
ՀՀ կառավարության 2024 թվականի
դեկտեմբերի 19-ի N 2037-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԱՅԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են պետական, բյուջետային հիմնարկների տնօրինության տակ գտնվող հանրակացարանային բնակելի տարածքների և հանրակացարանային բնակարանային ֆոնդի (այսուհետ՝ բնակելի տարածքներ) նվիրատվության և սեփականաշնորհման հետ կապված հարաբերությունները:

2. Բնակելի տարածքները կարող են նվիրվել կամ սեփականաշնորհվել՝

1) համապատասխան տարածքում հաշվառված և վերջին երեք տարում փաստացի բնակվող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիներին, որոնք պետական աջակցությամբ իրականացված բնակապահովման ծրագրերի շրջանակներում երբևէ բնակարան (բնակելի տուն) ձեռք չեն բերել կամ բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար ֆինանսական աջակցություն չեն ստացել, ինչպես նաև վերջին 2 տարվա ընթացքում չեն ունեցել սեփականության իրավունքով իրենց պատկանող անշարժ գույք (բացառությամբ չկառուցապատված հողամասերի, բնակելի նշանակության օժանդակ շինությունների, ինչպես նաև ոչ բնակելի նշանակություն ունեցող շենքերի, շինությունների).

2) սույն կարգի համաձայն նվիրատվությամբ բնակելի տարածքներ նախկինում ձեռք բերած անձանց, որոնց նվիրատվությունից հետո բնակության նույն հասցեում սահմանված կարգով որպես բարելավում հատկացված է տարածք, եթե առնվազն վերջին երեք տարիների ընթացքում հաշվառված և փաստացի բնակվել են համապատասխան տարածքում.

3) 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած համապատասխան տարածքում հաշվառված և վերջին երեք տարուց ավելի փաստացի բնակվող այն անձանց, որոնք պետական աջակցությամբ իրականացված բնակապահովման ծրագրերի շրջանակներում երբևէ բնակարան (բնակելի տուն) ձեռք չեն բերել կամ բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար ֆինանսական աջակցություն չեն ստացել, ինչպես նաև վերջին 2 տարվա ընթացքում չեն ունեցել սեփականության իրավունքով իրենց պատկանող անշարժ գույք (բացառությամբ չկառուցապատված հողամասերի, բնակելի նշանակության օժանդակ շինությունների, ինչպես նաև ոչ բնակելի նշանակություն ունեցող շենքերի, շինությունների):

3. Մեկ անձի կողմից երկու և ավելի բնակելի տարածքներ զբաղեցնելու դեպքում՝ սույն որոշմամբ նվիրատվությամբ տրամադրվում է միայն մեկ բնակելի տարածք, որի համար հիմք է ընդունվում զբաղեցրած բնակելի տարածքներից՝ քաղաքացու հայեցողությամբ ընտրված բնակելի տարածքը:

4. Բնակելի տարածքում բնակվող և սույն կարգի 2-րդ կետի պահանջները բավարարող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները տարածքի նվի-րատվության կամ սեփականաշնորհման համար դիմում են ներկայացնում Հայաս-տանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե (այսուհետ՝ կոմիտե)՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում.

2) անձնագրի պատճենը՝ հաշվառման էջով, կամ նույնականացման քարտի պատճենը.

3) մեկից ավելի ընտանիքի անդամների դեպքում՝ ընտանիքի չափահաս անդամների անձնագրերի պատճենները՝ հաշվառման էջով կամ նույնականացման քարտերի պատճենները.

4) ընտանիքի անչափահաս անդամների ծննդյան վկայականների կամ անձնագրերի կամ նույնականացման քարտերի պատճենները.

5) տեղեկանք բնակության վայրից՝ տվյալ բնակելի տարածքում բնակվելու վերաբերյալ.

6) նվիրվող տարածքի վարձակալված լինելու դեպքում՝ նաև տեղեկանք վարձավճարի մասով պարտք չունենալու վերաբերյալ.

7) նույնականացման քարտ ներկայացրած անձանց համար՝ տեղեկանք համապատասխան լիազոր պետական մարմնի կողմից տրված՝ համապատասխան տարածքում հաշվառված լինելու վերաբերյալ.

8) սեփականության իրավունքով պատկանող հողամաս ունենալու դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանք՝ հողամասի չկառուցապատված լինելու մասին.

9) անհրաժեշտության դեպքում՝ իրավասու մարմնի կողմից տրված՝ անձի 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու փաստը հաստատող տեղեկանք:

5. Կոմիտեն ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը սույն կարգի պահանջներին: Բնակելի տարածքներն այլ պետական մարմնին ամրացված լինելու դեպքում պահանջում է բնակիչների ամբողջական ցանկի, նրանց կողմից զբաղեցված սենյակների մակերեսների և հաշվեկշռային արժեքների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականների պատճենները:

6. Կոմիտեն սույն կարգի 4-րդ, 5-րդ կետերում նշված փաստաթղթերն ստանալուց հետո դրանց հիման վրա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում և շրջանառության մեջ է դնում համապատասխան տարածքները բնակիչներին նվիրելու կամ սեփականաշնորհելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

7. Կոմիտեն բնակելի տարածքը զբաղեցնող բնակչի կողմից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված և հաստատված բնակելի տարածքի հատակագծի (ցանկով նշված մակերեսների տարբերություններ առաջանալու դեպքում՝ հիմք ընդունելով նշված հասցեների

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված և հաստատված բնակելի տարածքի հատակագծի մակերեսը մինչև 3% թույլատրելի շեղումով) և կարգի 4-րդ կետով պահանջվող փաստաթղթերի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված ժամկետում կնքում է նվիրատվության պայմանագիր:

8. Կարգի համաձայն նվիրատվության ենթակա բնակելի շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ գույքի (հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների) նկատմամբ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով անցնում է բնակելի շենքի առանձին տարածքների նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերողներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ